ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ/

/ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2010Թ. ԱՊՐԻԼԻ 30-Ի ՈՐՈՇՄԱՄԲ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ՈՐՈՇՄԱՄԲ/

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

III.ԱՐԳԵԼՎԱԾ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՔԱԳԾԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ..... 5

IV. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 9

V. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ 9

VI. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....11

VII. ՀԱՇՎԵՏՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ.....12

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գավառի պետական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) խրախուսում և ապահովում է ուսանողների, դասախոսների և Համալսարանի աշխատակազմի մյուս անդամների ակադեմիական ազնվությունը:

2. Ակադեմիական ազնվություն նշանակում է, որ ցանկացած ակադեմիական աշխատանք անհրաժեշտ է կատարել և ներկայացնել առանց խաբեության, գրագողության և արգելված տեղեկատվական աղբյուրներից օգտվելու, առանց իրավական ակտերի նորմերի և բարեվարքության պահանջները խախտելու:

3. Ակադեմիական ազնվության Հայեցակարգն ուղղված է Համալսարանի բարի համբավի պահպանմանը, նրա ուսանողների, վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների, ինչպես նաև ԳՊՀ ներքին և արտաքին այլ շահակիցների, իրավունքների պաշտպանությանը:

4. Ուսանողները պետք է գործեն ակադեմիական ազնվության սույն Հայեցակարգի, ԳՊՀ ուսանողի Խարտիայի, ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների և Համալսարանի մյուս կանոնակարգերի, ՀՀ հակակոռուպցիոն իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

5. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն է կրում Համալսարանում ազնվության հայեցակարգի պահպանման համար, պարտավոր է հետևել ՀՀ օրենքների պահանջներին, բարեվարքության կանոններին և սույն փաստաթղթում ներկայացված ակադեմիական ազնվության սկզբունքներին:

6. Սույն Հայեցակարգով սահմանվել է համապատասխան ընթացակարգ՝ ուղղված Համալսարանում ակադեմիական գործընթացների ազնվության ապահովմանը և ակադեմիական ազնվության կանոնների խախտումների կանխմանը:

7. Սույն Հայեցակարգը, ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը, ԳՊՀ էթիկայի կանոնները, ուսանողի խարտիան, Համալսարանի ներքին կարգապահական կանոնները և հակակոռուպցիոն ուղղվածություն ունեցող կանոնակարգերը համարվում են Համալսարանի ակադեմիական ազնվության քաղաքականության հիմնական փաստաթղթերը:

8. Սույն Հայեցակարգի սկզբունքներն են.

1) օրինականություն,

2) սոցիալական արդարություն,

3) թափանցիկություն,

4) բարեվարքություն,

5) հրապարակայնություն,

6) հաշվետվողականություն,

7) մատչելիություն,

8) կրթություն՝ առանց կոռուպցիայի:

9. Սույն Հայեցակարգի նպատակներն են.

1) Համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,

2) համալսարանական անձնակազմի ցանկացած անդամի համար արդարության և ազնվության մթնոլորտի ապահովումը,

3) կաշառակերության և կոռուպցիայի այլ դրսևորումների կանխումը:

10. Ելնելով այս նպատակներից՝ դասախոսը և ուսանողը Հայեցակարգի դրույթների խախտում նկատելիս, քննարկում են խնդիրը՝ արդար լուծում տալու համար: Համաձայնության չգալու դեպքում խախտում նկատած կողմը դիմում է Ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով): Ակադեմիական ազնվության վերաբերյալ քննարկումներն ուղղված են Համալսարանում կրթական ազնիվ միջավայր ապահովելուն՝ ակադեմիական անազնվության դեպքերի համար սահմանելով հակազդեցության համապատասխան միջոցներ:

11. Սույն Հայեցակարգի խնդիրներն են.

1) ապահովել ակադեմիական ազնվության մշակույթը Համալսարանում,

2) պահպանել Համալսարանի բարի համբավը,

3) կանխել կաշառք տալու, ստանալու, կաշառքի միջնորդության, շորթման, հովանավորության, կոռուպցիոն այլ երևույթների, ՀՀ օրենքների խախտման և ակադեմիական անազնվության ցանկացած այլ դեպք:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ակադեմիական ազնվություն« նշանակում է ակադեմիական աշխատանքները կատարել առանց կաշառքի, գրագողության, խաբեության, կեղծիքի, խարդախության, առանց այլ անձանցից արգելված օգնություն ստանալու կամ օգտվելու տեղեկատվության ցանկացած արգելված աղբյուրից:

2. «Ակադեմիական անազնվություն» նշանակում է դիտավորյալ կերպով կատարել կամ փորձել կատարել կամ օգնել այլ անձին՝ կատարելու ցանկացած ակադեմիական աշխատանք, որը հակասում է ակադեմիական ազնվությանը, չի համապատասխանում սույն Հայեցակարգով սահմանված սկզբունքներին:

3. «Ակադեմիական աշխատանք» նշանակում է ցանկացած գործողություն, որը կատարվել է Համալսարանի կրթական ծրագրերի և դասընթացների, ինչպես նաև վերապատրաստումների, լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման հետ կապված: Ակադեմիական աշխատանքը ընդգրկում է բակալավրիատի ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, քննությունները, ստուգարքները, կուրսային աշխատանքները, հաշվետվությունները, ինքնուրույն, անհատական աշխատանքները, լաբորատոր աշխատանքները և գիտական փորձերը, որոնք կատարվում են Համալսարանի բոլոր կրթական աստիճաններում, առկա և հեռակա ուսուցման մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում: Այն կարող է լինել գրավոր կամ բանավոր:

4. «Ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողով»՝ 5 հոգուց բաղկացած հանձնաժողով, որի նպատակն է Համալսարանում սույն Հայեցակարգի դրույթների գործողության ապահովումը: Հանձնաժողովը սույն Հայեցակարգում նախատեսված ընթացակարգով ուսումնասիրում է անազնվության ցանկացած դրսևորում և կայացնում որոշում: Հանձնաժողովը կազմված է երեք ուսանողից և երկու դասախոսից:

5. «Հանձնաժողովի անդամ»՝ այն ուսանողը, դասախոսը, ով ընտրվում է Ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովում: Հանձնաժողովի դասախոս անդամները պետք է տվյալ պահին լինեն Համալսարանի աշխատող, իսկ ուսանող անդամները տվյալ պահին լինեն Համալսարանի ուսանող:

6. «Համալսարանական անձնակազմի անդամ»՝ Համալսարանի ուսանողներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ցանկացած անդամ, ով առնչվում է

Համալսարանի ակադեմիական գործընթացների հետ, դասավանդում կամ հսկում է ուսանողների ուսուցումը:

III. ԱՐԳԵԼՎԱԾ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՔԱԳԾԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

1.**Պրոֆեսորադասախոսական անձնակազմի** յուրաքանչյուր անդամ իր գործունեությունն իրականացնում է Համալսարանի կանոնադրության, ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների, այլ կանոնակարգերի, սույն Հայեցակարգի, իր պաշտոնի անձնագրի և իր աշխատանքային պայմանագրով սահմանված գործառույթներին համապատասխան:

2.Համալսարանի յուրաքանչյուր **ուսանող** իր գործունեությունն իրականացնում է ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների, ԳՊՀ ուսանողի Խարտիայի, ԳՊՀ ներքին կարգապահական կանոնների, այլ կանոնակարգերի, սույն Հայեցակարգի, և իր՝ Համալսարանի հետ կնքած պայմանագրի համապատասխան: Դրանցում ամրագրված նորմերի խախտումները համարվում են արգելված վարքի դրսևորումներ:

3. Ոչ մի ուսանող չպետք է կատարի, փորձի կատարել կամ աջակցի այլ ուսանողի՝ կատարելու անազնվության ցանկացած ակտ՝ կապված ակադեմիական աշխատանքի, կրեդիտ ստանալու, գնահատական ստանալու կամ այլ գործընթացների հետ:

4. **Ակադեմիական անազնիվ վարքի դրսևորումներ** են որակվում այն հնարավոր գործողությունները, որոնք կապված են **ստելու, խարդախելու, կեղծելու, կաշառելու** հետ: «Ստել, խարդախել, կեղծել, կաշառել»-ը ակադեմիական աշխատանքի կատարման ընթացքում կաշառումն է, ցանկացած կեղծ տեղեկությունների տրամադրումը, ապօրինի գործողությունների կատարումը, այն է.

1) Քննությանը չներկայանալու կամ ակադեմիական աշխատանքը չներկայացնելու համար դասախոսին կամ Համալսարանի համապատասխան աշխատակցին ներկայացնել կեղծ տեղեկանքներ և/կամ կատարել որոշակի ոչ պաշտոնական վճարում, տալ նվեր կամ կատարել այլ շահադիտական, ապօրինի գործողություն:

2) Կեղծել փաստաթղթեր, ցանկացած ուսումնական, հետազոտական, լաբորատոր կամ փորձնական աշխատանքի արդյունքները կամ դրանց վերաբերյալ տվյալները և տեղեկությունները:

3) Դասընթացների, սեմինար պարապմունքների, քննարկումների, նիստերի ընթացքում, այլ գործընթացներում ներկայացնել կեղծ տեղեկություններ:

4) Ակադեմիական առաջադիմության ապահովման համար ներկայացնել ակադեմիական աշխատանք, որն արդեն ներկայացվել է, բացառությամբ այն դեպքերի, երբ այն լրացնում է նախկինում կատարված աշխատանքը:

5) Այլ անթույլատրելի գործողություններ:

5. **Ակադեմիական անազնիվ վարքի դրսևորում է <u>գրագողությունը</u>**, որը նշանակում է.

1) Գողանալ, ապօրինի յուրացնել կամ այլ արգելված ձևով ձեռք բերել ակադեմիական ցանկացած աշխատանքին վերաբերող նյութեր և այլ տեղեկություններ (քննությունների, ստուգարքների գնահատականների գրանցումներ, գնահատման տեղեկագրեր, ակադեմիական աշխատանքի արդյունքներ, համակարգչային սարքավորումներ և տվյալներ, լաբորատոր նյութեր և այլն):

2) Կատարել գործողություններ առանց համապատասխան աղբյուրի վկայակոչման, այն է՝

ա) օգտագործել այլ անձի պատկանող գրավոր կամ բանավոր խոսքերն ամբողջությամբ կամ մասամբ՝ առանց համապատասխան հղում կատարելու,

բ) ներկայացնել այլ անձին պատկանող գաղափարը, տեսությունը կամ բանաձևը որպես աշխատանքի հեղինակի բնագիր աշխատանք,

գ) գնել (կամ այլ կերպով ձեռք բերել կամ վաճառել, տրամադրել) այլ անձի կողմից կատարված աշխատանք կամ այլ առաջադրանք և ներկայացնել որպես ուսանողի ինքնուրույն աշխատանք,

դ) այլ արգելված արարքներ:

6. **Ակադեմիական անազնիվ վարքի դրսևորում է <u>արգելված աջակցությունը</u>**, որը նշանակում է.

1) արտագրել կամ թույլատրել այլ անձանց՝ արտագրելու քննական հարցատոմսի պատասխանները,

2) քննության ժամանակ փոխանցել կամ ստանալ տվյալ առարկային վերաբերող տեղեկություններ, նախապես սահմանված չթույլատրվող ռեսուրսներ,

3) թույլատրել այլ անձին՝ ուսանողի փոխարեն կատարել ամբողջ առաջադրանքը կամ դրա մի մասը:

7. **Ակադեմիական անազնիվ վարքի դրսևորում** է վիրավորելը, որը նշանակում է ուսանողի կամ դասախոսի կողմից վիրավորական արտահայտություններ անելը և դիմացինի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը, ինչպես նաև էթիկայի կանոնների այլ խախտումները:

Նման գործողությունները համարվում են սույն Հայեցակարգի խախտում, և դրանք կատարող անձինք ենթակա են պատասխանատվության:

8. Վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից **ակադեմիական անազնվության հնարավոր դրսևորումներ** են համարվում նաև.

1) պաշտոնական դիրքի չարաշահումը,

2) անձնական, շահադիտական նպատակներով ուսանողների հնարավորություններն օգտագործելը և/կամ նվերներ վերցնելը, ծառայություններ ստանալը,

3) ակադեմիական աշխատանքներ իրականացնելիս՝ ակնհայտ սուբյեկտիվիզմի դրսևորումը,

4) ուսանողների նկատմամբ հարկադրանքի կիրառումը, լսարանից անհիմն հեռացումը, տվյալ առարկայի սահմաններից դուրս հանձնարարականներ տալը,

5) անխնա վերաբերմունքը գույքի, նյութական ռեսուրսների նկատմամբ,

6) Համալսարանի վարկանիշի նկատմամբ պատվախնդիր վերաբերմունքի բացակայությունը,

7) անտարբերությունը ակադեմիական անազնվության դեպքերի նկատմամբ,

8) աշխատանքային պայմանագրի դրույթների խախտումները,

9) պաշտոնի անձնագրով կամ աշխատանքային նկարագրով ամրագրված գործառույթների չկատարումը կամ լիազորությունների գերազանցումը:

9. Արգելվում է նաև ակադեմիական անազնվություն համարվող ցանկացած այլ վարք՝ անգամ, եթե այն հատուկ նշված չէ վերոնշյալ գործողությունների ցանկում:

10. Համալսարանի **<u>վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների համար *պատշաճ վարքագծի ակտեր*</u>** են համարվում այն գործողությունները, որոնք համապատասխանում են ՀՀ օրենքներին, Համալսարանի կանոնադրությանը, ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրին, ԳՊՀ էթիկայի կանոններին, այլ կանոնակարգերի, սույն Հայեցակարգի և աշխատանքային պայմանագրի դրույթներին:

11. Սույն Հայեցակարգը նախատեսում է Համալսարանում տեղի ունեցած ակադեմիական անազնվության դեպքերի ուսումնասիրության ընթացակարգը, ըստ որի վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ցանկացած անդամ պարտավոր է խախտումների վերաբերյալ տեղյակ պահել Հանձնաժողովի նախագահին, եթե նրա կողմից ձեռնարկված միջոցները արդյունք չեն տվել:

12. Յուրաքանչյուր դասախոս պետք է սատարի ակադեմիական ազնվության մթնոլորտի ձևավորմանը: Անթույլատրելի են ՀՀ օրենքների և բարոյական սկզբունքների խախտումները:

13. Սույն Հայեցակարգի դրույթները վերաբերում են նաև ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող վերապատրաստումներին, լրացուցիչ կրթական ծրագրերին, վարպետության դասերին, արտաքին շահակիցների հետ իրականացվող այլ աշխատանքներին:

14. Համալսարանի ***<u>ուսանողների համար պատշաճ վարքագծի ակտեր</u>*** են համարվում այն գործողությունները, որոնք համապատասխանում են ՀՀ օրենքներին, Համալսարանի կանոնադրությանը, ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրին, ԳՊՀ էթիկայի կանոններին, այլ կանոնակարգերի, սույն Հայեցակարգի և Համալսարանի հետ ուսանողների կնքած պայմանագրի դրույթներին:

15. Յուրաքանչյուր ուսանող պարտավոր է տեղեկանալ սույն Հայեցակարգի դրույթներին և պահպանել դրանք:

16. Ուսանողը պետք է ձեռնպահ մնա կաշառք տալուց, նյութական բնույթի ծառայություններ մատուցելուց, չդիմի միջնորդությունների, գնահատականները

վաստակի ազնիվ ճանապարհով, ինչպես նաև խնամքով վերաբերվի Համալսարանի գույքին, նյութական ռեսուրսներին:

17. Հայեցակարգի կանոնները տարածվում են ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքների, ինչպես նաև տարբեր միջոցառումների կազմակերպման և անցկացման աշխատանքների վրա:

IV. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Հանձնաժողովի կազմն ընտրվում է 2 տարի ժամկետով:
2. ԳՊՀ երկու դասախոս անդամին ընտրում է Համալսարանի գիտական խորհուրդը՝ ֆակուլտետների խորհուրդների կողմից առաջադրված թեկնածուներից:
3. Հանձնաժողովի 3 ուսանող անդամներին ընտրում է Համալսարանի ուսանողական խորհուրդը՝ ֆակուլտետների ուսանողական խորհուրդների առաջադրած թեկնածուներից:
4. Ընտրությունը կազմակերպում են համապատասխանաբար Համալսարանի գիտական խորհուրդը և ուսանողական խորհուրդը՝ փակ, գաղտնի քվեարկությամբ:
5. Հանձնաժողովի որևէ անդամի հրաժարվելու կամ Համալսարանից ազատվելու դեպքում այդ տեղի համար կազմակերպվում է ընտրություն՝ նույն սկզբունքներով:
6. Հանձնաժողովի նախագահը ընտրվում է 2 տարի ժամկետով, Հանձնաժողովի բոլոր 5 անդամների կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

V. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Սույն Հայեցակարգի դրույթները խախտած և խախտումն արձանագրող կողմեր կարող են լինել ինչպես ԳՊՀ ուսանողները, այնպես էլ վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները, ինչպես նաև արտաքին շահակիցները:
2. Դասախոսը, ուսանողը, վարչական անձնակազմի անդամը կարող են ակադեմիական ազնվության խախտման դեպքը քննարկել և համաձայնության գալ՝ կողմերի համար ընդունելի լուծում տալով: Համաձայնության չգալու դեպքում, դասախոսը կամ /և/ ուսանողը խախտման մասին տեղեկացնում են Հանձնաժողովի նախագահին, որից հետո նախագահը հրավիրում է Հանձնաժողովի նիստ՝ նշանակելով նիստի օրը և ժամը, նիստին հրավիրելով Հանձնաժողովի անդամներին և տվյալ դեպքին առնչված կողմերին՝ ուսանողին և դասախոսին:

3. Հայեցակարգի դրույթները խախտած կողմը և խախտումն արձանագրող կողմը իրավունք ունեն ներկա գտնվել և հանգամանքները պարզաբանել Հանձնաժողովի նիստում: Եթե սույն Հայեցակարգի համաձայն՝ նիստի մասին ծանուցվելուց հետո, կողմերը չեն ներկայանում, Հանձնաժողովին իրավունք է վերապահվում որոշել խախտման առկայությունը և ընդունել համապատասխան որոշում:

4. Եթե նույն խախտման վերաբերյալ մեղադրվում են մեկից ավելի անձինք, ապա յուրաքանչյուրի համար կազմակերպվում են Հանձնաժողովի առանձին նիստեր, բացառությամբ այն դեպքերի, երբ Հանձնաժողովի բոլոր անդամները համաձայնության են գալիս, որ տվյալ դեպքը լուծելու համար ավելի նպատակահարմար է կազմակերպել Հանձնաժողովի համատեղ նիստ:

5. Հայեցակարգի խախտումն արձանագրող կողմը, խախտման մեջ մեղադրվող կողմը(երը) և Հանձնաժողովի հինգ անդամները համարվում են նիստի միակ մասնակիցները, որոնք իրավունք ունեն Հանձնաժողովի նիստերի ընթացքում անել հայտարարություններ, տալ հարցեր, պատասխանել առաջադրված հարցերին:

6. Հանձնաժողովի նիստի ընթացքում մեղադրող կողմը պետք է ներակայացնի և ապացուցի Հանձնաժողովին, որ մյուս կողմը խախտել է ակադեմիական ազնվության կանոնները: Կողմերին լսելուց հետո Հանձնաժողովի անդամները պետք է գրավոր որոշում կայացնեն՝ նախատեսելով պատասխանատվության միջոցը:

7. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Եթե Հանձնաժողովի անդամների պարզ մեծամասնությունը գտնում են, որ մեղադրող կողմը չի կարողացել ապացուցել մյուս կողմի մեղավոր լինելը, ապա վերջինս մեղավոր չի ճանաչվում:

8. Հանձնաժողովը կարող է, ըստ անհրաժեշտության, կողմերից պահանջել գրավոր բացատրություն:

9. Հանձնաժողովի նիստից հետո 5 օրվա ընթացքում կողմերը ծանուցվում են որոշման մասին, իսկ որոշման պատճենը ներկայացվում է ԳՊՀ ռեկտորին:

10. Հանձնաժողովի կայացրած որոշումը կողմերը կարող են բողոքարկել Համալսարանի ռեկտորին՝ ոչ ուշ, քան որոշման մասին ծանուցվելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Կողմերը կարող են բողոքարկել Հանձնաժողովի որոշումը՝ հետևյալ հիմքերով.

1) որոշումը խիստ է,

2) Հանձնաժողովի նիստից հետո նոր կամ լրացուցիչ հանգամանքներ են հայտնաբերվել,

3) Այլ հիմքով:

12.Դիմումը պետք է գրվի և ստորագրվի բողոքարկողի կողմից և պետք է բովանդակի բողոքարկման պատճառները և փաստերը:

13. Այն դիմումները, որոնք վերաբերում են ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատականներին, բողոքարկում են ռեկտորի հրամանով ստեղծված ԳՊՀ ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման հանձնաժողովին՝ ԳՊՀ ամփոփիչ ատեստավորման կարգի համաձայն:

VI. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1. ԳՊՀ դասախոսը, ուսանողը, վարչական անձնակազմի անդամը կարող են համաձայնության գալ ակադեմիական ազնվության խախտման հետևանքների վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ գործընթացը պետք է դաստիարակչական լինի այն ուսանողի համար, ով խախտել է Հայեցակարգը, սակայն պետք է արդար բնույթ կրի այն ուսանողների համար, ովքեր ազնվորեն կատարել են ակադեմիական աշխատանքները:

2. Առաջին անգամ Հանձնաժողովի կողմից Հայեցակարգի դրույթները խախտելու մեջ մեղադրված ուսանողի(ների) նկատմամբ կարող են կիրառվել պատասխանատվության հետևյալ միջոցները.

1) բանավոր նկատողություն՝ լրացուցիչ աշխատանքներ կատարելու հանձնարարությամբ (ակադեմիական և/կամ կազմակերպական բնույթի),

2)գրավոր նկատողություն՝ ուսանողի(ների) գնահատականը նվազեցնելու հնարավորությամբ,

3)ուսանողի հեռացման մասին առաջարկի ներակայացում Համալսարանի ռեկտորին:

3. Հանձնաժողովի կողմից Հայեցակարգի դրույթները խախտելու մեջ մեղադրված դասախոսի(ների) նկատմամբ կարող է կայացվել որոշում՝ դիմելու ԳՊՀ ռեկտորին՝ դասախոսին գրավոր նկատողություն հայտարարելու կամ աշխատանքից ազատելու առաջարկով:

4. ԳՊՀ ռեկտորը կարող է պահանջել տվյալ դեպքի վերաբերյալ բոլոր փաստերը:

5.Հանձանաժողովի որոշումները հաստատվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:

VII. ՀԱՇՎԵՏՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

1. Համալսարանի ղեկավարությունն ապահովում է սույն Հայեցակարգի մատչելիությունը /հասանելիությունը/, որպեսզի ուսանողները, վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմը տեղեկանան սույն փաստաթղթում ամրագրված ակադեմիական ազնվության սկզբունքներին՝ դրանք պահպանելու և տարածելու նպատակով:

2. Հանձնաժողովը ԳՊՀ գիտական խորհրդի առջև հանդես է գալիս հաշվետվությամբ ակադեմիական անազնվության դեպքերի և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների վերաբերյալ: Տվյալները չպետք է ներկայացվեն անհատական /անվանական/ սկզբունքով, այլ ընդհանուր առմամբ՝ ներկայացնելով խախտման դեպքերի թիվը, բնույթը:

3. Համալսարանի ղեկավարությունը Հայեցակարգի հասանելիությունը և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվության հրապարակումն ապահովում է հետևյալ միջոցներով.

1) տեղեկատվական թերթիկների միջոցով սույն Հայեցակարգի լուսաբանում,

2) Հայեցակարգի հատվածների ներկայացում և դրա իրականացման մասին պարբերաբար տեղեկատվություն «Գեղամա» հեռուստաընկերության միջոցով,

3) Համալսարանի պաշտոնական www.gsu.am կայքէջում Հայեցակարգի ամբողջական տարբերակի և Հանձնաժողովի հաշվետվության ազատ բեռնելու հնարավորություն,

4) Համալսարանի, ֆակուլտետների խորհուրդների նիստերի, ամբիոնների նիստերի և ուսանողական խորհրդի նիստերի ընթացքում պարբերաբար Հայեցակարգի դրույթների և դրա իրականացման մասին տեղեկատվության ներկայացում: